ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ №5

«24» 01 2019 թ. գ. Երևան

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն օրենքի 6-րդ, 7-րդ և 9-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետը, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքին ազդարարման դեպքում որպես լիազորած անձ և հաղորդումների հաշվառման ու հաղորդումներին ընթացք տալու տալու համար պատասխանատու նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Ա. Մարուխյանին:

2. Արտաքին ազդարարման դեպքում, այդ թվում՝ միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու

համար պատասխանատու անձ նշանակել ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Արմեն Նիկողոսյանին:

3. Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն հրամանի առաջին և երկրորդ կետերով սահմանված պատասխանատու անձանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

5. Հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ